«Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում» մագիստրոսական ծրագիր

Ընդհանուր տեղեկություն
«Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում» (Securities market analysis and management) մագիստրոսական կրթական ծրագիրը պատրաստում է ֆինանսական ոլորտում արժեթղթերի շուկայի վերլուծության, ակտիվների կառավարման, ներդրումային ծառայությունների մատուցման ունակություններով տնտեսագիտության մագիստրոսի որակավորում ունեցող որակյալ մասնագետներ, որոնք ունեն մեծ պահանջարկ արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայություններ և ակտիվների կառավարում իրականացնող կազմակերպություններում: Ծրագիրը մշակվել է արժեթղթերի շուկայի մասնակիցների ակտիվ մասնակցությամբ և միտված է ոլորտի կառավարման փորձի նորագույն զարգացումներին: «Արժեթղերի շուկայի վերլուծություն և կառավարում» մագիստրոսական կրթական ծրագիրը նպատակաուղղված է արժեթղթերի շուկայում գիտական և գործնական ունակությունների ձևավորմանը: Արժեթղթերի շուկայի վերլուծության և կառավարման ոլորտի մասնագետը տիրապետում է արժեթղթերի շուկայի վերլուծության, ակտիվների կառավարման և ներդրումային ծառայությունների մատուցման հմտություններին: Մյուս կողմից ծրագիրը պատրաստում է բավականին լայն ունակություններով ու հմտություններով մասնագետներ ֆինանսական տարբեր ինստիտուտների համար: Շրջանավարտին շնորհվում է «Տնտեսագիտության մագիստրոս» որակավորում: Ծրագրի տևողությունը 2 տարի է: Ծրագրի շրաջանակներում որպես դասախոսներ ներգրավվելու են ՀՀ կենտրոնական բանկի, առևտրային բանկերի, ապահովագրական և ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ՀՊՏՀ լավագույն մասնագետներից: Ակնկալվում է նաև ոլորտի հայտնի կազմակերպություններից հրավիրյալ դասախոսների ներգրավում, սեմինարների և քննարկումների կազմակերպում, ինչպես նաև՝ ուսանողների մասնակցություն ոլորտի բազմաբնույթ միջոցառումներին: Ուսումնական գործընթացի համար, բացի ՀՊՏՀ ենթակառուցվածքներից, կկիրառվեն նաև արժեթղթերի շուկայի մասնակից գործընկեր կազմակերպությունների ենթակառուցվածները, ծրագրային հնարավորությունները, գրադարանային ռեսուրսները, որոնց ուսանողները կծանոթանան հենց դասընթացների շրջանակներում և կազմակերպվող փորձառությունների ընթացքում՝ այցելելով ընկերություններ:

Մասնագիտության նկարագիր

«Արժեթղերի շուկայի վերլուծություն և կառավարում» մագիստրոսական կրթական ծրագիրը պատրաստում է ֆինանսական ոլորտում արժեթղթերի շուկայի վերլուծության, ակտիվների կառավարման, ներդրումային ծառայությունների մատուցման ունակություններով տնտեսագիտության մագիստրոսի որակավորում ունեցող որակյալ մասնագետներ, որոնք ունեն մեծ պահանջարկ արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայություններ և ակտիվների կառավարում իրականացնող կազմակերպություններում: Ներկայումս ֆինանսական շուկաները դարձել են տնտեսության առավել դինամիկ և կայուն զարգացող ոլորտը, իսկ արժեթղթերի շուկան՝ դրա ամենաարագ զարգացող և հեռանկարային ոլորտը: ՀՀ-ում արժեթղթերի շուկայի վերլուծության և ակտիվների կառավարման ունակություններով մասնագետների պահանջն ավելի է մեծանում ներդրումային և կենսաթոշակային ֆոնդերի անընդհատ զարգացման շնորհիվ: Մասնագիտությունն ավելի է կարևորվում, քանի որ ՀՀ ԿԲ և շուկայի մասնակիցների կողմից ոլորտի աշխատողներին են ներկայացվում որակավորման պահանջներ, և այս առումով մագիստրոսական ծրագիրը հաշվի է առնում նման որակավորումների համար անհրաժեշտ հիմնական գիտելիքներն ու հմտությունները:

Դասընթացները ներառում են արժեթղթերի շուկայի վերլուծության, ակտիվների կառավարման, ներդրումային ծառայությունների մատուցման համար կարևոր այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են ֆինանսական գործիքների և շուկաների ֆունդամենտալ և տեխնիկական վերլուծությունները, ներդրումային ծառայությունների մատուցումը, ֆինանսական ակտիվների արժեթղթավորումը, ներդրումների կառավարումը և այլն: Առանձնակի ուշադրություն է դարձվում էկոնոմետրիկ մոդելավորմանը, մակրո և միկրո տնտեսագիտության հետ կապված գիտելիքներին, ինչպես նաև առկա են դասընթացներ՝ կապված ոլորտի հաշվապահության և տնտեսական գործունեության վերլուծության հետ:

Աշխատանքի հնարավորություններ

Ֆինանսական շուկան ՀՀ տնտեսության ամենադինամիկ զարգացող ոլորտներից է և ոլորտում առկա փոփոխություններն ու զարգացումները մշտապես նոր պահանջներ են դնում մասնագետների գիտելիքների, կարողությունների և հմտությունների առումով: Ֆինանսական շուկաներում ակտիվ զարգացող ոլորտ է արժեթղերի շուկան, որի մասնակիցներն են բանկերը, ապահովագրական ու ներդրումային ընկերությունները, ներդրումային և կենսաթոշակային ֆոնդերը, արժեթղթեր թողարկող և արժեթղթերում ներդրումներ կատարող իրական ոլորտի կազմակերպությունները:

Կրթական ծրագիրը պատրաստվել է՝ հաշվի առնելով արևմտյան բուհերի փորձը, Որակավորված Ֆինանսական Վերլուծաբանների (*Chartered Financial Analyst-CFA*), ՀՀ

կենտրոնական բանկի կողմից ոլորտի մասնագետների որակավորման պահանջները, որոնց պահանջարկը ֆինանսական ոլորտում անընդհատ աճում է: Շրջանավարտներն աշխատաշուկայում կարող են զբաղեցնել ֆինանսական կազմակերպությունների և ոչ ֆինանսական կազմակերպությունների այնպիսի վարչական կամ կառավարչական հաստիքներ, որոնք պահանջում են առավել խորը և գիտական մակարդակի գիտելիքներ, արժեթղթերի շուկայի վերլուծության, ակտիվների կառավարման, ներդրումային ծառայությունների մատուցման ունակություններ:

Ծրագրի շրջանավարտները պահանջված կլինեն բանկերում, ներդրումային ընկերություններում, ապահովագրական ընկերություններում, ներդրումային և կենսաթոշակային ֆոնդերում, ֆոնդային բորսայում, դեպոզիտարային ծառայություններ մատուցող կազմակերպություններում և ոչ ֆինանսական ընկերություններում՝ որպես ներդրումային ծառայությունների մատուցման, ակտիվների կառավարման և շուկայի վերլուծության մասնագետներ:

Շրջանավարտները կկարողանան իրենց գիտելիքներն առավել արդյունավետ կիրառել՝

- ֆինանսական ոլորտը կարգավորող բոլոր մակարդակների պետական մարմիններում՝ ՀՀ ֆինանսների, ՀՀ էկոնոմիկայի նախարարություններում և այլն,
- ՀՀ կենտրոնական բանկում,
- Հայաստանի Ֆոնդային Բորսայում,
- Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայում,
- առևտրային բանկերում,
- ապահովագրական ընկերություններում,
- ներդրումային (ինվեստիցիոն) և կոնսաթոշակային ֆոնդերում,
- ներդրումային ընկերություններում, ինչպես նաև ոչ ֆինանսական կազմակերպություններում: